

ԿԱՐԾԻՔ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՍԵԼԻՍՅԱՆԻ

«ԴԱԻԱՆԱԿԱՆ ՆՈՐ ԻՐԱՎԻՃԱԿԸ ԵՒ ԸՄԲՈՆՈՒՄՆԵՐԸ՝ ՀԱՏ 19-ՐԴ ԴԱՐՈՒ
40-50-ԱԿԱՆ ԹԹ ԱԻԵՏԱՐԱՆԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԻ (Կ. ՊՈԼԻՍ, ԶՄԻՒՌՆԻԱ)»
վերնագրով թ.00.05 «Կրոնի տեսություն և պատմություն» մասնագիտությամբ
պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար
ներկայացված ատենախոսության վերաբերյալ

Աշխատանքը բաղկացած է՝ ներածությունից, երեք զինից, եզրակացություններից և օգ-
տագործված աղբյուրների ու գրականության ցանկից:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ (ծավալը՝ 24 էջ)

**ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ - «ԵՒՐՈՊԱԿԱՆ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄՆ ՈՒ ԱՐԵՒՏԱՀԱՅ ԱԻԵՏԱՐԱ-
ՆԱԿԱՆՆԵՐԸ 19- ՐԴ Դ. 40-ԱԿԱՆ ԹԹ» (ծավալը՝ 36 էջ):**

**ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ - «ՍԻՐՈՅ, ՅՈՅՈՒ ԵՒ ՄԵՂՔԻ ԸՄԲՈՆՈՒՄՆԵՐԸ ՀԱՅ ԱԻԵՏԱՐԱ-
ՆԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԷԶ (ծավալը՝ 33 էջ):**

**ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ - «ՀՈԳԵԻՈՐ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ԿԵԱՆՔԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐ-
ՆԵՐԸ (ծավալը՝ 42 էջ):**

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ (ծավալը՝ 6 էջ):

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿՈՒՄ (ծավալը՝ 10 էջ) առ-
կա է 120 միավոր սկզբնաղյուր, աշխատություն և մամուլ (իրականում, ավելի քան՝ 201
միավոր), որոնց նկատելի մասը (47) օտարալեզու իրատարակություններ են: Ատենախոսու-
թյան ծավալը (առանց գրականության ցանկի) 159 էջ է, իսկ ընդհանուրը՝ 169:

Ներածությունում Սելիմյանը ներկայացրել է ատենախոսական թեման հիմնավորող հիմ-
նական չափորոշիչները, այն է՝ թեմայի կարևորությունը կամ արժենորումը պատմական տե-
սական չափորոշիչները, արդիականությունը, ատենախոսության նպատակը, խնդիրները, մեթոդաբա-
նական հիմքերը, ժամանակագրական շրջանակները, գիտական նորույթը, կիրառական
նշանակությունը, թեմայի ուսումնասիրության աստիճանը կամ սկզբնաղյուրների ու գրա-
կանության տեսությունը և ատենախոսության կառուցվածքն ու բովանդակությունը:

Առաջին գլխում ատենախոսը քննարկել է Եվրոպական Եկեղեցական բարեկարգության կամ բարենորոգչության գաղափարախոսական հարցերը և այդ համատեքստում՝ արևմտահայ ավետարականների գործունեությունը 19-րդ դ, 40-ական թվականներին:

Երկրորդ գլուխը վերաբերում Հայ Ավետարանական Եկեղեցու դիտանկյունից՝ սիրո, հույսի և մեղքի ըմբռնումներին:

Երրորդ գլխում ատենախոսն անդրադարձել է համայնքի հոգևոր-մշակութային և ազգային հիմնախնդիրներին:

Եզրակացություններում կատարվել են քննարկված հիմնախնդիրների ամփոփիչ եզրահանգումներ:

Առաջին գլուխը կազմված է երեք ենթագլխից:

Առաջին ենթագլխում (ՀՈԳԵՒՈՐ ԱԿՈՒՆՔՆԵՐԸ) ատենախոսն անդրադարձել է Եկեղեցական բարեկարգության գաղափարախոսությանը և մասնավորապես՝ բողոքականության դավանաբանության հինգ դրույթներին: Քրիստոնեական արևմուտքի համար 15-16-րդ դարերը վճռորոշ ժամանակաշրջան եր, եթե տեղի ունեցավ մշակութային զարթոնք: Այդ ժամանակին են վերաբերում՝ Բտալական Վերածնունդը, նրա ազդեցությունը ողջ Եվրոպայում, Նոր Աշխարհի բացահայտումը, երևոյթներ, որոնք վճռորոշ եղան ողջ աշխարհի համար: Այդ ժամանակ տեղի ունեցած սոցիալ-տնտեսական ու մշակութային փոփոխություններն իրենց ազդեցությունը քողեցին նաև կրոնական կյանքի վրա: Եվրոպական մի շարք երկրներում (Գերմանիա, Անգլիա, Ֆրանսիա, Շվեյցարիա, Հոլանդիա և այլն) 16-րդ դարասկզբին սկիզբ առավ կրոնական շարժում, որը հայտնի է «Ռեֆորմացիա» («Բարեկարգութիւն») անվամբ: Ռեֆորմացիայի գաղափարախոսությունը մշակել էին աստվածաբաններ Մարթին Լյութերը, Ժան Կալվինը և Ուլրիխ Ցվինգլին: Ատենախոսն հատկապես անդրադարձել է Լյութերի և Կալվինի՝ հոգևորի վերաբերյալ տեսական մոտեցումներին: Այստեղ ներկայացվել են բողոքականության դավանաբանության հիմնական դրույթները:

Երկրորդ ենթագլխում (ՀԱՅ ԱԻԵՏԱՐԱՍԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ) ներկայացված են՝ Հայ Ավետարանական շարժումն, այդ համայնքի գործունեության շրջադարձային փուլը, Օսմանյան կայսրությունում միսիոներական կառույցների գործելառմը, կրոնական մամուլի գաղափարական ուղեգծերը և այլն:

Երրորդ ենթագլխում (ԱՐԵՒՏԱՇԱՅՈՅ ԱՌԱՋԻՆ ԿՐՈՆԱԹԵՐԹԸ) Սելիմյանն անդրադարձել է արևմտահայ առաջին կրոնաթերթին: Քննարկելով նաև կրոնական այլ պարբերականներ՝ ատենախոսը փորձել է վերլուծել դրանցում արտացոլված դավանական և կրոնա-

բարոյական հարցերը: Սելիմյանն այստեղ անդրադարձել է ավետարականների հրատարակություններին («Շտեմարան պիտանի գիտելեաց» /Զմիւռնիա/, «Աւետարեր» /Կ. Պոլիս/, «Աւետարեր մանկանց» /Կ. Պոլիս/ և այլն), դրանց դավանական ուղղվածությանը, կրթության, դաստիարակության և լեզվական հիմնախնդիրներին: Այս առումով ուշագրավ են Հք. Աճառյանի դիտարկումները. «Առաջին անգամ լեզուի մաքրութեան վրայ ուշադրութիւն է դարձնում Զմիւռնիոյ անդրանիկ հայ թերթը՝ Շտեմարանը, որ ամերիկեան միսիոնարների հրատարակութիւնն էր: Բողոքական միսիոնարները դուրս են գալիս մեր մէջ իբրեւ աշխարհաբար լեզուի կանոնաւորութեան առաջին պատճառ եւ նորանցից յետոյ սկսում են օրից օր շատանալ հայ թերթերը «աշխատելով հետզհետէ մաքրել ու պատրաստել աշխարհիկ նոր գրական լեզուն»:

Երկրորդ գլուխը (ՍԻՐՈՅ, ՅՈՅՍԻ ԵՒ ՄԵՂՔԻ ԸՄԲՈՆՈՒՄՆԵՐԸ ՀԱՅ ԱԻԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԷՋ) բաղկացած է երկու ենթագլխից:

Առաջին ենթագլխում (ՍԵՐՆ ՈՒ ՅՈՅՍՈՅ ՊԱՐԲԵՐԱԹԵՐԹԻ ԸԿԱԼՍԱՍԲ) ատենախոսը քննարկել է «Աւետարեր և Շտեմարան պիտանի գիտելեաց»-ում հրատարակված հոդվածները՝ սիրո ընկալումների ու դրսնորումների տեսանկյունից:

Երկրորդ ենթագլխում (ՄԵՂՔԸ ՊԱՐԲԵՐԱԹԵՐԹԻ ԸԿԱԼՍԱՍԲ) ատենախոսն անդրադարձել է մեղսագործության ավետարանական ընկալումներին: Նա փորձել է վերլուծել նաև մեղավորության և չարիքի քրիստոնեական մեկնությունները:

Երրորդ գլուխը (ՀՈԳԵՒՈՐ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ ԿԵԱՆՔԻ ՀԻՄՍԱԽՆԴԻՐ-ՆԵՐԸ), որն ատենախոսության ամենածավալուն բաժինն է, բաղկացած է երեք ենթագլխից:

Առաջին ենթագլխում (ԱԶԱՏ ՄԱՐԴՈՒ ԲԱՐՈՅԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒԹԻՒՆԸ) Սելիմյանը փորձել է վերլուծել մարդու ազատականության տեսությունն՝ ըստ ավետարանական դավանարանության: Այստեղ քննարկվել են նաև քաղաքակրթության և քրիստոնեության հարաբերակցության որոշակի հարցեր:

Երկրորդ ենթագլուխը (ՀՈԳԵՒՈՐ ՄՇԱԿՈՅԹԻ ԸՄԲՈՆՈՒՄԸ) վերաբերում է հոգևոր մշակույթին: Այստեղ ընդհանուր մշակույթը դիտարկվել է, որպես մարդկային ձեռքբերման կատարյալ ամբողջություն, իսկ հոգևոր մշակույթը՝ հոգևոր կատարելագործության ամբողջություն:

Ատենախոսը մշակույթ երևույթը դիտարկել է նաև աստվածաբանության համատեքստում «Մշակոյթը, որ այժմ կը դիտարկուի ըստ աւետարանականներու, չի կրնար ուղղակի որոշակի հասարակութեան մշակոյթ ըլլալ, ինչպէս յունահռոմեական, միջնադարեան կամ

ժամանակակից արեւմտեան կարգ մը աստուածաբաններ, ինչպէս եւ մարդաբաններ, քրիստոնէական հաւատը արեւմտեան մշակոյթի անբաժանելի մաս կը համարեն»:

Երրորդ ենթազիսում (ԿՐՕՆ, ԱԶԳԱՍԻՐՈՒԹԻՒՆ, ԴԱՍԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԵՒ ԿՐԹՈՒԹԻՒՆ) Սելիմյանն անդրադարձել է քրիստոնէական ընկալումներին՝ ազգ, կրոն, դաստիարակություն և կրթություն համատեքստերում: Նա փորձել է վերլուծել ազգի և մշակոյթի նույնականացման գաղափարական մոտեցումները: Ըստ հեղինակի, յուրաքանչյուր ժողովուրդ, այդ թվում հայերն, ունեն հոգևոր մշակույթի իրենց տարբերակիչ հատկանիշները:

Այսպիսով, ատենախոսը փորձել է վերլուծել դավանական իրավիճակն ու ըմբռնումներն՝ ըստ 1840-1850-ական թվականների Հայ ավետարանական մամուլի իրատարակումների:

Ընդհանուր առմամբ, այս աշխատանքը հաջողված է: Մասնավորապէս, արժեքավոր են օգտագործված մամուլի նյութերը, որոնք ոչ միայն ունեն սկզբնադրյուրի նշանակություն, այլև դրանց նկատելի մասն առաջին անգամ են մտնում գիտական շրջանառության մեջ:

Գնահատելով կատարված աշխատանքը՝ միաժամանակ ունենք որոշակի դիտողություններ և նկատառումները

- Ըստ ատենախոսի, Հայ ավետարանականներն իրենց գործունեությունը սկսեցին՝ քննադատելով հայոց ավանդական ծեսերն ու սովորույթները: Հարց է ծագում՝ ինչո՞ւ մերժվեցին հոգևոր կամ հումանիտար մշակոյթի բաղադրիչներ հանդիսացող ավանդական ծեսերը, սովորույթները, հավատալիքները, ավանդագրույցները, որոնք, միաժամանակ՝ հայոց ինքնությունն արտացոլող կարևորագույն ցուցիչներ են: Եթե դրանք մշակույթը են, ապա ինչո՞ւ են մերժվում, իսկ եթե մշակոյթը չեն, ապա ի՞նչ հիմնավորումներով: Միզուցե՞ այստեղ մշակոյթ երևութը դիտարկվում է դրանց առաջնային կամ երկրորդական նշանակության կամ այլ տեսանկյուններից:

- Հստակ չի ատենախոսի այն տեսակետը, թե «ինչո՞ւ արեւմտեան մշակոյթը չդիտարկել իբրև քրիստոնէութեան ծնունդ»: Այդ դեպքում հարց է առաջ գալիս՝ թե արևմտյան մշակոյթը ասելով տարածական, ժամանակագրական և բովանդակային ի՞նչ համատեքստերում է այն դիտարկվում:

- Ճիշտ կլիներ, որ մամուլի հղումներում նախ գրվեր՝ հեղինակի անունը և վերնագիրը, իսկ եթե հեղինակ չկա՝ նշվեր վերնագիրը: Եթե այս շարադրանքը լիներ այս դիտողության տրամաբանությամբ, ապա գրականության ցանկում կլիներ ոչ թե շուրջ 64 միավոր պարբերական մամուլի նյութ (ցանկում նշված է 21 միավոր, որը շատ ընդհանրական է), այլ նույնիսկ այդ

թվի կրկնակին: Խոսքը վերաբերում է ոչ միայն «Աւետարեր եւ Շտեմարան պիտանի զիտելեաց» և «Շտեմարան պիտանի զիտելեաց» ամսաթերթերին, այլև բոլոր հանդեսներին, ժողովածուներին և հանրագիտարաններին: Հակառակ դեպքում, ցանկում ամբողջական չեն երևա այն կոնկրետ հոդվածները կամ հեղինակները, որոնք առկա են տողատակերում. Օրինակ՝ հղում 187, էջ 109 - Կողմն Սեղիչի /1389-1464/ տոհմի հիմնադիրը: /Էնցիկլոպեդիչ-
կий словарь Брокгауза и Ефона : в 86 т. (82 т. и 4 доп.). - СПб. 1890 -1907. հղում 121, էջ 78 –
Ռշտունի Խ. Ե., «Մշակ», Ֆրեզո, 1939, թիւ 14 /1378/:

- Երբեմն տողատակերում հղված որոշ հոդվածներ նշված չեն ցանկում (օրինակ՝ հղում 8, էջ 10 - Միսիոնարական Բանքեր (Պութոն, Արտարին Առաքելութիւններու Ամերիկեան Յանձ-
նաժողով, 1846), էջ 126-127): հղում 49, էջ 45 - Դանտէ Ալիկիերի, Աստուածային կատակեր-
գութիւն /թարգմանիչ՝ Արքուն Տայեան/, Եջ հրատ., Ե., 1983, էջ 498/: հղում 70, էջ 52- U. R.
Գևորգյան, Ամերիկյան միսիոներների գործունեությունն Արևմտյան Հայաստանում 1895-
1914 թվականներին, Ե., 2015 /Սեղմագիր/ և այլն:
- Ներածության մեջ ատենախոսն արժեսորել է թեմային առնչվող որոշ հեղինակների աշխա-
տություններ, որոնք բացակայում են Գրականության ցանկից (խոսքը վերաբերում է օրինակ՝
Գ. Լետնեանի, Գր Զարբահանլեանի, Վ. Զարգարեանի, Ա. Ալպօյածեանի և այլ ուսումնա-
սիրություններին տես էջ 19): Ամենայն հավանականությամբ, ատենախոսն իրազեկ է
նշված այդ աշխատություններից, սակայն, ըստ երևույթին, տեխնիկական կամ այլ պատ-
ճառներով դրանք դուրս են մնացել ցանկից:
- Այս աշխատանքն ունի ավելի շատ կրոնագիտական կամ աստվածաբանական ուղղվա-
ծություն, որը դարձյալ գնահատելի է: Սակայն, լավ կլիներ, որ Սելիմյանն անդրադառնար
նաև հայ իրականության մեջ այդ դավանանքի անցյալի և արդի դրսուրումներին, համայնքի
ժողովրդագրական կազմին, Հայ ավետարանական եկեղեցու ստեղծման պատմաքաղաքա-
կան դրդապատճառներին, ընդդիմադիրների (մասնավորապես՝ Հայ Առաքելական եկեղե-
ցու) վերաբերմունքին, միսիոներների գործեակերպին և այլն: Ճիշտ է, այդ երևույթներին
ատենախոսն անդրադառնել է, սակայն դրանք հիմնականում ունեն դիպվածային բնույթ:
- Ըստ ատենախոսի՝ «Օսմանեան կայսրութիւն ժամանած առաջին միսիոնարները տպատր-
ուած էին այն փաստով, որ կայսրութեան բոլոր ժողովուրդներէն հայերն ամենեն բացն էին
բողոքական միսիոնարներու գործունեութեան հանդեպ»: Այս առումով լավ կլիներ, որ հեղի-
նակն իր տեսակետն արտահայտեր, միաժամանակ խորքային վերլուծելով նաև այն իրողու-

թյունը, թե ինչո՞ւ արևմտյան միսիոներները չկարողացան /թե՞ չուզեցին/ ավետարանական դարձնել թուրքերին, քրդերին, հրեաներին և այլէթնիկ հանրույթներին:

- Աշխատանքն ավելի կշահեր, եթե ատենախոսն օգտագործեր նաև հետևյալ շատ կարևոր աշխատությունները.

- Օրմանյան Մ., Ազգապատում, հ. Գ, Էջմիածին, 2001:
- Թութիկյան Վ., Հայ ավետարանական եկեղեցին. 1846-1996, Դետրոյտ, 1996, 378 էջ:
- Ղազարյան Ս., Լեվոնյան Ռ., Հայաստանյաց ավետարանական եկեղեցի (Հայաստան-Կովկաս), Երևան, 1999, 248 էջ:
- Յակոբ Արք. Գլնձեան, Մարտին Լութեր, Մի բարեպաշտ վանականի ըմբռատությունը, Երևան, 2015, 519 էջ:

Այդուհանդերձ, նշված դիտողությունները խորապես չեն ազդում ատենախոսության գիտական արժեքի վրա:

Ներկայացված թեզն, ընդհանուր առմամբ, բավարարում է թեկնածուական աշխատանքների պահանջները, և միջնորդում ենք ԵՊՀ Աստվածաբանության ֆակուլտետում գործող մասնագիտական խորհրդին՝ շնորհելու Հարություն Սելիմյանին պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան՝ «Կրոնի տեսություն և պատմություն» մասնագիտությամբ հրապարակային պաշտպանության ներկայացված «ԴԱԻԱՆԱԿԱՆ ՆՈՐ ԻՐԱՎԻՃԱԿԸ ԵՒ ԸՄԲՈՆԻՄՆԵՐԸ՝ ԸՍՏ 19-ՐԴ ԴԱՐՈՒ 40-50-ԱԿԱՆ թթ. ԱԻԵՏԱՐԱՆԱԿԱՆ ՄԱՍՈՒԻԼԻ (Կ. ՊՈԼԻՍ, ԶՄԻՒՌՆԻՍ)» ատենախոսության համար:

Առաջատար կազմակերպություն՝


ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ,

ՀԱԻ Էթնոնցիոլոգիայի բաժին,

բաժնի վարիչ, պատմ. գիտ. դոկտոր, Միհրան Գալստյան //

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Էթնոնցիոլոգիայի բաժնի վարիչ, պատմ. գիտ. դոկտոր Միհրան Գալստյանի ստորագրությունը
հաստատում եմ՝

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության գիտական գծով փոխանորեն

Արտեն Բոբոխյան //

15. 02. 2021թ